«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա»
Հասարակական Կազմակերպության
և իր Դուստր Կազմակերպություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

և

Անկախ աուդիտորի եզրակացություն

2023թ. դեկտեմբերի 31-ին

ավարտված տարվա համար

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ և իր դուստր կազմակերպություններ
Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն....3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն....6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն....7
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն....8
Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրությունների ցանկ....9
Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ....10

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» ՀԿ-ի ժողովին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա ՀԿ-ի (հետայսու՝ Կազմակերպություն)՝ և նրա դուստր Կազմակերպությունների (հետայսու բոլորը միասին՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքի ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «*Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում:
Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:
Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Խումբը կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:
Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս համախմբված ֆինանսկան հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Խմբի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Խմբի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Խումբը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր առմամբ ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք ղեկավարությանը և կառավարման օղակներում ներգրավված անձանց հաղորդակցում ենք աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, ներառյալ աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին հսկողության կարևոր թերությունների վերաբերյալ:

29 հունիսի, 2024թ.
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

«Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ և իր դուստր կազմակերպություններ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթ.	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Գործառնական եկամուտներ	5	5,344,219	7,333,268
Գործառնական ծախսեր	6	(5,461,653)	(4,988,539)
Վարչական ծախսեր	7	(2,435,780)	(1,535,064)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		**(2,553,214)**	**809,665**
Ֆինանսական եկամուտ		5,146	745
Ֆինանսական ծախս		(46,858)	(9,555)
Արտարժույթի փոխարկումից ծախսեր		-	-
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից օգուտ/(վնաս)		(343,969)	(342)
Փոխարժ. տարբ. օգուտ/(կորուստ), զուտ		(58,388)	(142,424)
Շահույթ մինչև հարկումը		***(2,997,283)***	***658,089***
Շահութահարկի գծով ծախս	8	(69,636)	(127,971)
Տարվա շահույթ		(3,066,919)	530,118
Այլ համապարփակ եկամուտ			-
Ընդամենը տարվա համապարփակ արդյունք		-	-
ՀՖՖ-ին վերագրելի տարվա շահույթ և համապարփակ արդյունք		-	-

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 6 - 27) հաստատվել են «Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» ՀԿ ղեկավարության կողմից 28.06.2024թ.

Արմեն Մելքոնյան
ՀՖՖ Նախագահ

Վահրամ Ամիրյան
ՀՖՖ Գլխավոր հաշվապահ

«Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ և իր դուստր կազմակերպություններ
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	9	11,091,734	11,485,763
Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ	10	2,789,521	2,950,130
Ոչ նյութական ակտիվներ	11	120,726	101,715
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		25,055	170,540
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	12	891,429	1,378,192
Հետաձգված հարկային ակտիվ	8	10,328	9,496
		14,928,793	***16,095,836***
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	13	1,289,784	1,302,030
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	254,621	890,724
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	2,615,705	2,558,272
Տրված փոխառություններ		25,300	28,500
		4,185,410	***4,779,526***
Ընդամենը ակտիվներ		***19,114,203***	***20,875,362***
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	16	13,977,915	14,665,523
Ստացված վարկեր և փոխառություններ	17	909,237	-
		14,887,152	***14,665,523***
Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված վարկեր և փոխառություններ	17	736,938	482,426
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18	4,131,435	3,006,697
Շահութահարկի գծով պարտավորություն	8	107,620	117,849
Եկամուտներին վերաբերող շնորհներ	19	2,665,401	2,950,253
		7,641,394	***6,557,225***
Ընդամենը պարտավորություններ		***22,528,546***	***21,222,748***
Զուտ ակտիվ		***(3,414,343)***	***(347,386)***

«Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ և իր դուստր կազմակերպություններ
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2023թ.	**2022թ.**
	Հազար դրամ	**Հազար դրամ**
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Տարվա շահույթ	(2,997,283)	-
Կարգավորումներ:		
Մաշվածություն և ամորտիզացիա	1,035,152	956,575
Կորուստ սարքավորումների դուրսգրումից	690,959	-
Ֆինանսական ծախսեր	41,712	2,814
Եկամուտ դրամաշնորհներից	(3,853,519)	(6,502,834)
Շահութահարկի ծախս	-	65,171
Արժեզրկման պահուստ	22,806	48,409
Արձակուրդային ռեզերվ	30,035	4,937
Այլ ճշգրտումներ	-	-
Զուտ կորուստ/(շահույթ) փոխանակման տարբերություններից	58,388	(286,378)
Գործառնական դրամական հոսքերը մինչև շրջանառու միջոցների փոփոխությունները	***(4,971,750)***	***(5,711,306)***
Պաշարների փոփոխություններ	12,246	(5,253)
Փոփոխություններ առևտրային և այլ դեբիտորական պարտքերում	666,698	(382,337)
Փոփոխություններ առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում	1,098,099	295,854
Եկամուտների հետ կապված դրամաշնորհների փոփոխություններ	2,881,057	6,451,078
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր մինչև եկամտահարկը	***4,658,100***	***6,359,342***
Վճարված շահութահարկ	***(80,619)***	***(13,016)***
Զուտ կանխիկ գումար գործառնական գործունեությունից	***(394,269)***	***635,020***
Արտահոսք ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերումից	(718,846)	(449,157)
Ոչ ընթացիկ ակտիվների ավելացում	-	1,096,473
Հաշվի առնելով փոխառությունները	(19,606)	(3,000)
Ընթացքի մեջ գտնվող շինարարության ավելացում	160,609	(1,711,142)
Զուտ կանխիկ միջոցներ, որոնք օգտագործվում են ներդրումային գործունեության համար	***(577,843)***	***(1,066,826)***
Վճարված տոկոսներ	(41,712)	(2,828)
Ստացված կարճաժամկետ բանկային վարկեր/(մարված), զուտ	1,088,413	486,036
Զուտ դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	***1,046,701***	***483,208***
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճը	***74,589***	***51,402***
Արտարժույթի փոխանակման ազդեցությունը կանխիկի և դրամական միջոցների համարժեքների վրա	(17,156)	(80,776)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	2,558,273	**93,924**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին (տես ծանոթագրություն 15)	**2,615,706**	**64,550**

Բովանդակություն

1. Խմբի մասին 10
2. Պատրաստման հիմունքներ 12
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ 15
4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում 16
5. Գործունեությունից եկամուտներ 20
6. Գործունեությունից ծախսեր 20
7. Վարչական ծախսեր 21
8. Շահութահարկ 21
9. Հիմնական միջոցներ 23
10. Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ 24
11. Ոչ նյութական ակտիվներ 25
12. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ 25
13. Պաշարներ 26
14. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր 27
15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 27
16. Ակտիվներին վերաբերող շնորհներ 27
17. Ստացված վարկեր և փոխառություններ 27
18. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր 28
19. Եկամուտներին վերաբերող շնորհներ 28
20. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն 29
21. Պայմանական պարտավորություններ 32
Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ 32

1. Խմբի մասին

1.1 Խումբը և նրա հիմնական գործունեությունը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները 31 դեկտեմբերի 2022թ. ավարտված տարվա համար ներառում են «Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» ՀԿ-ի («ՀՖՖ» կամ «Կազմակերպություն») և նրա 100% բաժնեմասնակցությամբ դուստր ընկերությունների՝ ՀՖՖ «Տեխնիկական Կենտրոն-Ակադեմիա» ՓԲԸ-ի, ՀՖՖ «Վազգեն Սարգսյանի անվան մարզադաշտ» ՓԲԸ-ի (բոլորը միասին հետայսու՝ «Խումբ») ֆինանսական հաշվետվությունները:

ՀՖՖ-ն շահույթ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է: Գրանցված է ՀՀ Իրավաբանական անձանց Պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից՝ 21 փետրվարի 2003թ.-ին որպես Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա Իրավաբանական Անձանց Միություն: 02 հոկտեմբեր 2018թ. վերագրանցվել է որպես Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա Հասարակական Կազմակերպություն:

ՀՖՖ-ն կազմավորվել է անսահմանափակ ժամանակով:

ՀՖՖ-ն ստեղծված է հասարակական կազմակերպության կարգավիճակ ունեցող ֆուտբոլային ակումբների և ֆուտբոլ խաղի զարգացմանը նպաստող ցանկացած այլ ոչ առևտրային կազմակերպությունների կամավոր միավորումից՝ իր անդամ կազմակերպությունների գործունեությունը համակարգելու, ինչպես նաև իրենց ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով:

ՀՖՖ–ն ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի և ֆուտբոլի եվրոպական ֆեդերացիայի լիիրավ անդամ է, ունի այդ կազմակերպություններում Հայաստանի ֆուտբոլային ակումբների և հավաքականների շահերը պաշտպանելու բացառիկ իրավունքներ:

ՀՖՖ-ի մարմինները և պաշտոնատար անձինք իրենց գործունեության ընթացքում պարտավոր են առաջնորդվել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրություններով, կանոնակարգերով, շրջաբերականներով և որոշումներով, ինչպես նաև ՖԻՖԱ-ի Վարքագծի կանոններով :

ՀՖՖ-ն չեզոք է քաղաքական և կրոնական հարցերում:

ՀՖՖ-ն գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում:

ՀՖՖ-ի կառավարման մարմինների աշխատանքային լեզուն հայերենն է:

ՀՖՖ-ի առաքելությունն է.

- ՀՀ-ում քարոզել և զարգացնել ֆուտբոլը, բարձրացնել նրա դերն անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը նպաստելու համար, հայկական ֆուտբոլի մակարդակը հավասարեցնել միջազգային չափանիշներին, հնարավոր բոլոր միջոցներով ամրապնդել միջազգային մարզական հարաբերությունները ֆուտբոլի ասպարեզում:
- Ընդունելի բոլոր միջոցներով զարգացնել, աջակցել, վերահսկել և կարգավորել ֆուտբոլ մարզաձևը ՀՀ ողջ տարածքում՝ ղեկավարվելով ազնիվ խաղի սկզբունքներով:
- Պաշտպանել իր անդամների իրավունքները և շահերը:

ՀՖՖ –ի նպատակներն են.

- Զարգացնել և ամրապնդել կապերը ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի հետ:
- Ապահովել գործնական հարաբերությունների ամրապնդումը Երևան քաղաքի և Հայաստանի մարզերի ֆուտբոլի ֆեդերացիայի և ակումբների հետ:
- Մշակել և իրագործել հանրապետությունում ֆուտբոլի զարգացման հեռանկարային ծրագրերը:

- Կազմակերպել ֆուտբոլային մրցումներ և հատկացնել ֆուտբոլի հանրապետական առաջնության, գավաթի խաղարկության և այլ մրցաշարերի կառուցվածքը, կանոնակարգը, օրացույցը:
- Հայաստանի տարածքում կազմակերպել և անցկացնել հանրապետական և միջազգային մրցախաղեր և վերահսկել անցկացվող բոլոր ընկերական խաղերը:
- Բարելավել բարձրակարգ մարզիկների պատրաստման համակարգը, ապահովել հավաքականների և ակումբների պատշաճ մրցաելույթներ միջազգային մրցաշարերում:
- Ձեռնարկել միջոցներ ֆուտբոլի մասնագետների և մրցավարների որակավորումը բարձրացնելու համար:
- Կազմակերպել մարզչական կադրերի և այլ մասնագետների ընտրություն հավաքականներում աշխատելու համար:
- Ուսումնասիրել և հանրագումարի բերել հայրենական և արտասահմանյան ֆուտբոլային ավանդույթներն ու փորձը, գործնականորեն ներդնել գիտամեթոդական նվաճումները:
- Ժամանակին կանխել ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնադրությունների խախտումները, ոչ մարզական արարքները և չարաշահումները ֆուտբոլային ոլորտում:
- Ապահովել մարզիկների, մարզիչների և այլ մասնագետների սոցիալական պաշտպանվածությունը ու հոգատարություն ցուցաբերել ֆուտբոլի վետերանների նկատմամբ:
- Օրենքով սահմանված կարգով հրատարակել և լուսաբանել ֆուտբոլին վերաբերվող իրադարձություններն ու նորությունները, հրատարակել գիտամեթոդական ձեռնարկներ:
- Իրականացնել իր կանոնադրական նպատակներին համապատասխան և օրենքով չարգելված այլ գործունեություն:

Խմբի աշխատողների միջին թվաքանակը 2023թ. կազմել է 265 աշխատող (2022թ.՝ 275 աշխատող):

1.2. Դուստր կազմակերպություններ

Ստորև ներկայացված են դուստր կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

Անվանում	Մայր կազմակերպության գտնվելու վայր	Սեփականության բաժնեմասեր 2023թ	Սեփականության բաժնեմասեր 2022թ.
«ՀՖՖ-ի Տեխնիկական Կենտրոն-Ակադեմիա» ՓԲԸ	ՀՀ	100%	100%
«ՀՖՖ-ի Վազգեն Սարգսյանի անվան մարզադաշտ» ՓԲԸ	ՀՀ	100%	100%

2. Պատրաստման հիմունքներ

2.1. Համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունք

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ) պահանջների համաձայն: ՖՀՄՍ-ները Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ստանդարտներն ու մեկնաբանություններն են: Դրանք բաղկացած են՝

- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից,
- Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներից,
- Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի (ՖՀՄՄԿ) մեկնաբանություններից և
- Մեկնաբանությունների մշտական կոմիտեի (ՄՄԿ) մեկնաբանություններից:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 3-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 20-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

2.2 Չափման հիմքերը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Խմբի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ ազգային արժույթն է՝ Դրամը: Այն հանդիսանում է նաև Կազմակերպության այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

2.4 Գործունեության անընդհատությունը

Սույն Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

2.5 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընկերությունը առաջին անգամ կիրառել է ստանդարտներում կատարված որոշակի փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը դեռևս չի ընդունել որևէ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը հրապարակվել է, բայց դեռևս ուժի մեջ չի մտել:

ՖՀՄՍ 17 Ապահովագրական պայմանագրեր

2017թ. Մայիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 17 *“Ապահովագրության պայմանագրեր”* , համապարփակ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտը, որը նախատեսված է ապահովագրական պայմանագրերի համար: *“Ապահովագրության պայմանագրեր”* ՖՀՄՍ 17-ը սկզբունքներ է սահմանում սույն ստանդարտի

գործողության ոլորտում գտնվող ապահովագրության պայմանագրերի ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման համար: ՖՀՄՍ 17-ը կփոխարինի ՖՀՄՍ 4 *“Ապահովագրության պայմանագրեր”* ստանդարտին, որը թողարկվել է 2005թ.: ՖՀՄՍ 17-ը կիրառելի է ապահովագրական պայմանագրերի բոլոր տեսակներին (ներառյալ՝ կյանքի ապահովագրություն, ոչ կյանքի ապահովագրություն, ուղղակի ապահովագրություն և վերաապահովագրություն), անկախ ապահովագրություն տրամադրող կազմակերպության տեսակից:
ՖՀՄՍ 17-ը նաև կիրառելի է որոշակի երաշխիքների և հայեցողական մասնակցության հատկանիշներով ֆինանսական գործիքների դեպքում: Կիրառելի են որոշակի բացառություններ: ՖՀՄՍ 17-ը սահմանում է հաշվապահական հաշվառման նոր պահանջներ ապահովագրական հատկանիշներով բանկային պրոդուկտների նկատմամբ: Այս պահանջները կարող են ազդել, թե որ գործիքները կամ դրանց բաղադրիչները կներառվեն ՖՀՄՍ 9-ի կամ ՖՀՄՍ 17-ի շրջանակներում:

Վարկային քարտեր և համանման ապրանքներ, որոնք ապահովագրական ծածկույթ են ապահովում թողարկողներից շատերը կարող են շարունակել կիրառել առկա հաշվապահական մոտեցումը՝ որպես ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական գործիք:

ՖՀՄՍ 17-ը իր շրջանակից բացառում է վարկային քարտերի պայմանագրերը (և այլ նմանատիպ պայմանագրերը, որոնք տրամադրում են կրեդիտային կամ վճարային պայմանավորվածություններ), որոնք համապատասխանում են ապահովագրության պայմանագրի սահմանմանը, միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը հաճախորդի հետ պայմանագրի գինը սահմանելիս չի արտացոլում ֆիզիկական անձի հետ կապված ապահովագրական ռիսկի գնահատումը:

Երբ ապահովագրական ծածկույթը տրամադրվում է որպես վարկային քարտի պայմանագրային պայմանների մաս, թողարկողը պարտավոր է՝

- Առանձնացնել ապահովագրության ծածկույթը և դրա նկատմամբ կիրառելի ՖՀՄՍ 17,
- Այլ բաղադրիչների նկատմամբ գործադրել այլ կիրառելի ստանդարտներ (Օրինակ է ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 15, Հասույթ գնորդների հետ պայմանագրերից կամ ՀՀՄՍ 37, Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ:

Վարկային պայմանագրերը, որոնք համապատասխանում են ապահովագրության սահմանմանը, բայց ապահովագրական իրադարձությունների փոխհատուցումը սահմանափակում են այն չափով, որն այլապես պահանջվում է ապահովադրի՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունը մարելու համար: Այդպիսի վարկերի թողարկողները, օրինակ՝ մահվան հրաժարմամբ վարկերը, ունեն տարբերակ կիրառելու ՖՀՄՍ 9-ը կամ ՖՀՄՍ 17-ը: Ընտրությունը կատարվում է պորտֆելի մակարդակով և համարվում է անփոփոխ:

ՖՀՄՍ 17-ը ուժի մեջ է մտնում 2023թ.-ի հունվարի 1-ից սկսվող կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ պահանջելով համեմատելի տվյալներ: Վաղ կիրառումը թույլատրելի է այն պայմանով, որ կազմակերպությունը նաև կիրառում է ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 15, ՖՀՄՍ 17 առաջին անգամ կիրառելու ամսաթվից ի վեր կամ դրանից առաջ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ

2020 թ. հունվարին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 1-ի 69-ից 76 պարբերություններում՝ պարտավորությունները որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները հստակեցնելու համար: Փոփոխությունները պարզաբանում են.

- Ինչ է նշանակում մարումը հետաձգելու իրավունք,
- Որ հետաձգելու իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի ավարտին
- Որ դասակարգման վրա չի ազդում կազմակերպության՝ հետաձգելու իրավունքը օգտագործելու հավանականությունը
- Որ միայն այն դեպքում, երբ փոխարկելի պարտավորության մեջ ներդրված ածանցյալ գործիքն

ինքնին հանդիսանում է բաժնային գործիք, ապա պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա։

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվի հետադարձ ուժով։

Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 8-ում, որտեղ ներկայացված է «հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումը։ Փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման տարբերությունը։ Ինչպես նաև, դրանք պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպությունները օգտագործում չափման հիմունքները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար։

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո։

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում

2021թ.-ի փետրվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է փոփոխություններ *ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում (Էականության մասին դատողությունների կիրառում),* որտեղ ներկայացված են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները։ Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով <նշանակալի> հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը <էական> հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս։

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը։ Քանի որ Գործնական Ցուցումներ 2-ի փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության էականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույց, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա։

Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)

2021 թվականի մայիսին Խորհուրդը հրապարակեց ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները, որոնք նեղացնում են ՀՀՄՍ 12-ի համաձայն նախնական ճանաչման բացառման շրջանակը, այն այլևս չի կիրառվում այն գործարքների մասով, որոնք հանգեցնում են հավասարապես հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների։ Փոփոխությունները պետք է կիրառվեն այն գործարքների համար, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո։ Ինչպես նաև, ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում պետք է ճանաչվեն նաև հետաձգված հարկային ակտիվը (եթե առկա է բավարար հարկվող շահույթ) և հետաձգված հարկային պարտավորությունը վարձակալության և ապագործարկման պարտավորությունների հետ կապված բոլոր նվազեցվող և հարկվող ժամանակավոր տարբերությունների համար։

Այս փոփոխությունները ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.

- Վաճառքի և վարձակալության վերադարձի պարտավորություն (Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում Վարձակալություն),
- Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում),
- Քովենանտներով ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1-ի Փոփոխություններ, Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում), և
- Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն և ՖՀՄՍ 7 Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ):

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս նոր հաշվապահական ստանդարտների և փոփոխությունների ազդեցությունը: Ընկերությունը չի հավատում, որ ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները էական ազդեցություն կունենան իր պարտավորությունների դասակարգման վրա: Ընկերությունը չի ակնկալում, որ IASB-ի կողմից թողարկված այլ ստանդարտներ, որոնք դեռ կիրառության մեջ չեն մտել, էական ազդեցություն կունենան Ընկերության վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Խումբը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

<u>Գնահատումներ և ենթադրություններ</u>

Համախմբման նպատակով վերահսկողության գնահատում

Համախմբման նպատակով Խումբը գնահատում է արդյո՞ք վերահսկում է ներդրման օբյեկտը: Վերահսկողություն առկա է, եթե Խումբը ներդրման օբյեկտում իր ներգրավվածության արդյունքում ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և ներդրման օբյեկտի նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն:
Փաստացի վերահսկողություն առկա է, եթե Խմբի քվեարկության իրավունք ունեցող բաժնեմասնակցությունն այլ քվեարկողների իրավունքների ու բաշխվածության համեմատ, Խմբին տալիս է անվերապահ գործնական իրավունք ուղղորդելու ներդրման օբյեկտի համապատասխան գործառնությունները:
Խումբն ունի 100% քվեարկության իրավունք բոլոր երեք դուստր կազմակերպություններում (ծնթ. 1.2): Խումբը գնահատում է, որ ունի անվերապահ գործնական կարողություն ուղղորդելու դուստր կազմակերպությունների համապատասխան գործառնությունները, ուստի համախմբում է այս դուստր կազմակերպությունները՝ առանց Չվերահսկվող-բաժնեմասի:

Իրական արժեքի չափում

Խմբի ֆինանսական հաշվետվություններում ներառված որոշ ակտիվներ և պարտավորություններ պահանջում են չափումներ իրական արժեքով և/կամ իրական արժեքի բացահայտում:

Կազմակերպության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը հնարավորինս հիմնվում է դիտարկելի շուկայից ստացվող ելակետային տվյալների վրա: Իրական արժեքի չափումները սահմանելու համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող արդյունքները դիտարկելի («իրական արժեքի աստիճանակարգ»):

- *Մակարդակ 1. Նույն ակտիվների կամ պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)*
- *Մակարդակ 2: Դիտարկելի ուղղակի կամ անուղղակի ելակետային տվյալներ, Մակարդակ 1-ի տվյալներից տարբեր*
- *Մակարդակ 3: Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա)*

Իրական արժեքների աստիճանակարգում այն մակարդակը, որին դասվում է իրական արժեքի չափումը, պետք է որոշվի ամենացածր մակարդակի ելակետային տվյալի հիման վրա, որը նշանակալի է ամբողջությամբ վերցրած իրական արժեքի չափման համար: Իրական արժեքի տեղափոխությունները մի մակարդակից դեպի մյուսը ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի են ունենում այդ տեղափոխությունները:

Պաշարների զուտ իրացվելի արժեքի գնահատում

Խումբը յուրաքանչյուր հաշվետու անսաթվի դրությամբ դիտարկում է արդյոք պաշարների զուտ իրացվելի արժեքը պակաս չէ դրանց ձեռքբերման արժեքից և նման դեպքերի հայտնաբերման դեպքում պաշարները չափում է դրանց զուտ իրացվելի արժեքով: Գնահատումները հիմնվում են հետհաշվեկշռային ժամանակահատվածի ուսումնասիրության, ինչպես նաև մոտ ապագայում շուկայում ակնկալվող փոփոխությունների վերաբերյալ Խմբի ղեկավարության ակնկալիքների վրա:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել (տե՛ս Ծանոթագրություն 20): Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի ղեկավարությունը վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ գնահատումները:

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիությունը

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիության գծով հաշվապահական հաշվառման գնահատումները կապվում են վարկունակության հետ: Ծանոթագրություն 4-ում անդրադարձ է կատարվում ֆինանսական ակտիվների և դրանց թվում դեբիտորական պարտքերի ռիսկերի գնահատմանը:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Խումբը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Խումբը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Խմբի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Խմբի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Խմբի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրային կրեդիտորական պարտքեր,
- Ստացված վարկեր ու փոխառություններ:

(բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

Ֆինանսական ակտիվներ

	Ծնթ.	2023 հազ. դրամ	2022 հազ. դրամ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ			
Առևտրային դեբիտորական պարտքեր	14	58,384	68,504
Դրամական միջոցներ	15	2,615,705	2,558,272
Ընդամենը		**2,674,089**	**2,626,776**

Ֆինանսական պարտավորություններ

	Ծնթ,	2023 հազ. դրամ	2022 հազ. դրամ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	18	357,191	237,834
Ստացված վարկեր և փոխառություններ	17	1,646,175	482,426
Ընդամենը		**2,003,366**	**723,542**

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ստացված փոխառությունները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ծանոթագրություն 20-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Խմբի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է անկանխիկ վաճառքից: Պարտքային ռիսկը նվազեցնելու նպատակով Կազմակերպությունը որդեգրել է այնպիսի քաղաքականություն, համաձայն որի անկանխիկ (վճարի հետաձգումով) վաճառքներն իրականացնում է միայն հիմնական գնորդներին:
Պարտքային ռիսկն առաջանում է նաև դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես նաև ժամկետային ավանդներից:
Պարտքային ռիսկի ազդեցությունը Խմբի գործունեության վրա

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը սահմանափակվում է Խմբի վերոհիշյալ ֆինանսական ակտիվներով, որոնք ամբողջությամբ ծագել են ներքին շուկայից:
Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Խմբի արտարժութային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Խմբի գործարքներն արտահայտված չեն գործառնական արժույթով, այսինքն՝ երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից, որոնք, ի սկզբանե արտահայտված են արտարժույթներով մասնավորապես՝ ԱՄՆ դոլար, եվրո, ռուբլի, շվեյցարական ֆրանկ, շվեդական կրոն:
31.12.2023թ.-ի դրությամբ արտարժույթով արտահայտված ակտիվները/(պարտավորությունները) հետևյալն են.

Արտարժույթով հոդվածներ	ԱՄՆ դոլար	Եվրո	Անգ. ֆունտ	Շվ. կրոն	Ռուբլի	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ	72,205	2,307	-	5	32	**74.549**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		40,451	-	-	-	**40,451**
	72,205	**42,758**	**-**	**5**	**32**	**115,000**
Վարկեր և փոխառություններ	-	(1,646,175)	-	-	-	**(1,646,175)**
Կրեդիտորական պարտքեր	(599,509)	(511)	-	-	(1,312)	**(601,332)**
	(599,509)	**(1,646,686)**	**-**	**5**	**(1,312)**	**(2,247,507)**
Զուտ արդյունք	**(527,304)**	**(1,603,928)**	**-**	**5**	**(1,280)**	**(2,132,507)**

31.12.2022թ.-ի դրությամբ արտարժույթով արտահայտված ակտիվները/(պարտավորությունները) հետևյալն են.

Արտարժույթով հոդվածներ	ԱՄՆ դոլար	Եվրո	Անգ. ֆունտ	Շվ. կրոն	Ռուբլի	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ	1,216	5,258	-	4	8	**6,486**

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	60,651	481,289	-	-	-	**541,940**
	61,867	**486,547**	**-**	**4**	**8**	**548,426**
Վարկեր և փոխառություններ	(196,785)	(285,641)	-	-	-	**(482,426)**
Կրեդիտորական պարտքեր	(201)	(52,976)	(42,457)	(4,140)	(1,816)	**(101,590)**
	(196,986)	**(338,617)**	**(42,457)**	**(4,140)**	**(1,816)**	**(584,016)**
Զուտ արդյունք	**(135,119)**	**147,930**	**(42,457)**	**(4,136)**	**(1,808)**	**(35,590)**

ԱՄՆ դոլարի, եվրոյի, ռուբլու, նկատմամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված են հետևյալ հաշվարկային փոխարժեքները.

	31.12.2023թ.	**31.12.2022թ.**	**Դրամի արժևորում/ (արժեզրկում) %**
	ՀՀ դրամ	**ՀՀ դրամ**	
1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը	404.79	393.57	2.85
1 Եվրոյի փոխարժեքը	447.90	420.06	6.62
1 Ռուբլու փոխարժեքը	4.50	5.59	(19.50)

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Խմբի գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Խմբի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:
Համաձայն Խմբի քաղաքականության՝ վերջինս պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի առնվազն 90 օրվա ընթացքում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Ներքոնշյալ աղյուսակներում ներկայացված են Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մարման ժամկետները: Աղյուսակները կազմված են ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա, հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները:

31.12.2023թ. դրությամբ	**Մինչև 3 ամիս հազ. դրամ**	**3-12 ամիս հազ. դրամ**	**1-2 տարի հազ. դրամ**	**2-5 տարի հազ. դրամ**	**5 տարուց ավելի հազ. դրամ**
Առևտրային կրեդիտորական պարտքեր	357,191	-	-	-	-
Ստացված վարկեր և փոխառություններ	-	736,938	-	-	-
	357,191	**736,938**	-	-	-

31.12.2022թ. դրությամբ	**Մինչև 3 ամիս հազ. դրամ**	**3-12 ամիս հազ. դրամ**	**1-2 տարի հազ. դրամ**	**2-5 տարի հազ. դրամ**	**5 տարուց ավելի հազ. դրամ**
Առևտրային կրեդիտորական պարտքեր	237,834	-	-	-	-
Ստացված վարկեր և փոխառություններ	-	482,426	-	-	-

	237,834	482,426	-	-	-

Վերոհիշյալ մարման ժամկետների վերլուծության մեջ ընդգրկված դրամական հոսքերը չեն ակնկալվում, որ տեղի ունենան ավելի վաղ ժամկետներում կամ նշված գումարներից տարբերվող գումարներով:

5. Գործունեությունից եկամուտներ

	2023 հազ. դրամ	2022 հազ. դրամ
Եկամուտներին վերաբերող շնորհներից	1,886,910	4,977,781
Ակտիվներին վերաբերող շնորհներից	1,966,609	1,095,233
Ծառայությունների մատուցումից	1,032,492	951,368
Ապրանքների վաճառքից	276,248	163,171
Այլ եկամուտներ	181,960	145,715
	5,344,219	**7,333,268**

6. Գործունեությունից ծախսեր

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Աշխատավարձի հատկացում	1,410,000	1,363,597
Վաճառքի ինքնարժեքը	716,550	608,325
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	508,694	277,103
Հյուրանոց, սնունդ	421,042	305,045
Ավիատոմսեր և գնացքի տոմսեր	350,221	614,541
Պարգևատրություն	341,073	126,758
Ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկումից կորուստներ	280,252	-
Տուգանքներ, տույժեր	269,514	1,502
Վիզայի և ապահովագրության ծախսեր	214,099	29,989
Մարզական գույք	193,178	259,185
ՈՒՄՀ և պաշտոնական հանդիպումներ	180,441	160,825
Անվտանգության կազմակերպում	86,097	43,757
Տրանսպորտային ծախսեր	74,206	91,456
ՀՄ մաշվածություն	73,706	820,538
Կազմակեպչական ծախսեր	60,182	2,205
Վերանորոգման ծախսեր	37,881	6,503
Ներկայացուցչական ծախսեր	33,619	51,505
Կադրերի վերապատրաստում	32,809	309
Բուժզննում/հետազոտություն	29,393	33,756
Օրապահիկ	26,042	27,348
Խաղերի վերլուծություն	23,411	32,596
Մարզադաշտի կամ մարզադահլիճի վարձակալություն	21,534	8,500
Դեղորայք	18,840	268
Արտարժույթի փոխարկումներից ծախսեր	27,267	80,965
Այլ գործառնական ծախսեր	31,606	41,962
	5,461,653	**4,988,539**

(*) Վաճառքի ինքնարժեքը ներառում է հետևյալ ծախսերը՝

	2023 հազ. դրամ	2022 հազ. դրամ
Աշխատավարձ	396,681	359,444
Մենդամթերք	104,027	82,325
Ծառայությունների ձեռք բերում	15,714	36,283
Ապրանքներ, նյութեր	184,708	113,408
Մաշվածության գծով ծախսեր	14,138	16,816
Այլ ծախսեր	1,281	49
	716,550	**608,325**

7. Վարչական ծախսեր

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Աշխատավարձ	847,567	721,329
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	24,398	6,821
Հիմնական միջոցների մաշվածություն	1,090,280	237,708
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	22,072	21,756
Փոստի և հեռահաղորդակցության գծով ծախսեր	35,607	22,458
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	33,171	166,121
Աուդիտորական և խորհրդատվության ծախսեր	7,200	14,625
Բանկային ծառայության ծախսեր	8,406	7,861
Ոչ ռեզիդենտի ԱԱՀ-ի գծով պակասեցման ծախսեր	13,617	8,807
Վառելիքի ծախս	-	17,640
Վարչական այլծախսեր	353,462	309,938
	2,435,780	**1,535,064**

Գործարքներ ղեկավարության հետ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հիմնական ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրությունը, այդ թվում՝ աշխատավարձը և պարգևատրումները, կազմել են 101,895 հազ. դրամ (2022թ. ընթացքում՝ 79,532 հազ. դրամ):

8. Շահութահարկ

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս	(70,468)	(129,746)
Հետաձգված հարկի գծով եկամուտ	832	1,775
	(69,636)	**(127,971)**

Հաշվետու տարվա համար ՀՀ հարկային օրենսգրքով շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2022թ.-ին՝ 18%):

Շահութահարկի գծով պարտավորություն

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդը	**117,849**	**56,531**
Տարվա ծախս	70,468	129,823

Վճարում	(80,697)	(68,505)
Տարեվերջի մնացորդը	**107,620**	**117,849**

9. Հիմնական միջոցներ

հազար դրամ

	Շենքեր	Կառուց-վածքներ	Սարքավո-րումներ	Տրանսպոր-տային միջոցներ	Գրասենյա-կային գույք	Այլ հիմնական միջոցներ	Հողամա-սսեր	Ընդամենը
Սկզբնական արժեք								
Առ 1 հունվարի 2022թ.	**10,331,877**	**4,248,044**	**728,226**	**253,742**	**759,215**	**278,763**	**595,110**	**17,194,977**
Ավելացումներ	1,550	41,000	92,050	19,893	16,395	71,934	1,398,635	1,641,456
Օտարում/Դուրսգրում	-		-	(4,930)	(1,234)	(125)	-	(6,289)
Վերադասակարգում	-	1,149,121	380	-	44	(424)	-	1,149,121
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**10,333,427**	**5,438,164**	**820,656**	**268,705**	**774,419**	**350,149**	**1,993,745**	**19,979,265**
Ավելացում	-	10,270	889,795	10,163	22,135	90,199	75,511	1,098,073
Նվազում	(330,266)	(715,663)	(37,272)	(6,156)	(29,044)	(2,365)	(34,729)	(1,155,496)
Վերադասակարգում	-	476,844	1,211	(2,573)	2,393	(1,628)	-	476,246
Ոչ նյութ. ակտ. վերադասակ.	-	-	-	-	(160,888)	-	-	(160,888)
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**10,003,161**	**5,209,614**	**1,674,390**	**270,138**	**609,016**	**436,355**	**2,034,527**	**20,237,200**
Կուտակված մաշվածություն	-	-	-	-	-	-	-	-
Առ 1 հունվարի 2022թ.	**4,389,285**	**1,531,866**	**601,038**	**193,195**	**592,616**	**170,223**	**-**	**7,478,223**
Տարեկան մաշվածություն	573,660	262,201	55,883	24,496	51,225	53,870	-	1,021,335
Նվազեցումներ	-	-	-	(4,930)	(1,001)	(125)	-	(6,056)
Վերադասակարգում	-	-	228	-	-	(228)	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**4,962,945**	**1,794,066**	**657,149**	**212,761**	**642,840**	**223,740**	**-**	**8,493,501**
Տարեկան մաշվածություն	569,706	288,781	64,139	15,008	37,335	122,565	-	1,097,533
Նվազեցումներ	(77,872)	(168,514)	(35,052)	(4,628)	(21,916)	(1,916)	-	(309,898)
Վերադասակարգում	-	60	74,982	(2,573)	2,573	(75,042)	-	-
Ոչ նյութ. ակտ. վերադասակ.	-	-	-	-	(135,670)	-	-	(135,670)
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	5,454,779	1,914,394	761,217	220,568	525,161	269,347	-	9,145,467
Հաշվեկշռային արժեք								-
Առ 1 հունվարի 2022թ.	**5,942,592**	**2,716,178**	**127,189**	**60,547**	**166,599**	**108,540**	**595,110**	**9,716,755**
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**5,370,481**	**3,644,097**	**163,507**	**55,944**	**131,579**	**126,408**	**1,993,745**	**11,485,763**
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**4,548,382**	**3,295,220**	**913,172**	**49,570**	**83,854**	**167,008**	**2,034,527**	**11,091,734**

31 դեկտեմբերի 2023թ. դրությամբ հիմնական միջոցների կազմում հաշվառվում են զրո հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցներ՝ 1,225,599 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,099,852 հազար դրամ): Հիմնական միջոցների մեջ ներառված է ՀՀ կառավարության 2004թ. N360-Ա որոշման հիման վրա 25 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով ստացված շենքը:

10. Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Սկզբնական մնացորդ	2,950,130	**2,867,656**
Ավելացումներ	373,238	1,231,595
Վերադասակարգում հիմնական միջոցների	(533,846)	(1,149,121)
Վերջնական մնացորդ	**2,789,521**	**2,950,130**

2023թ.

հազար դրամ

Մարզադաշտեր, դպրոց	01.01.2023թ.	Շարժ		31.12.2023թ.
		Ավելացում	Վերադասա-կարգում	
Արմավիրի Հոբելյանական մարզադաշտ	476,243	-	476,243	-
Վանաձորի մարզադաշտ	1,113,726	22,124	-	1,135,850
Վանաձորի ակադեմիա	7,351	-	-	7,351
Աբովյանի մարզադաշտ	1,072,958	27,200	57,603	1,042,555
Խ. Հովհաննիսյանի անվան ֆուտբոլի դպրոց	279,852	264,487	-	544,339
Արևային ֆոտովոլտային համակարգ		59,426	-	59,426
Ընդամենը	**2,950,130**	**373,237**	**533,846**	**2,789,521**

2022թ.

հազար դրամ

Մարզադաշտեր, դպրոց	01.01.2022թ.	Շարժ		31.12.2022թ.
		Ավելացո	Վերադասա-կարգում	
Արմավիրի Հոբելյանական մարզադաշտ	1,625,364	-	1,149,121	476,243
Վանաձորի մարզադաշտ	689,728	423,998	-	1,113,726
Վանաձորի ակադեմիա	-	7,351	-	7,351
Աբովյանի մարզադաշտ	540,504	532,454	-	1,072,958
Խ. Հովհաննիսյանի անվան ֆուտբոլի դպրոց	12,060	267,792	-	279,852
Ընդամենը	**2,867,656**	**1,231,595**	**1,149,121**	**2,950,130**

11. Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ

	Համակարգչային ծրագեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Առ 1 հունվարի 2022թ.	**44,059**	**66,117**	**110,176**
Ավելացումներ	76	32,477	32,553
Նվազում	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**44,135**	**98,594**	**142,729**
Ավելացումներ	25,577	6,403	31,980
Նվազում	-	-	-
Վերադասակարգում	66,330	(66,330)	-
Հիմնական միջոցի վերադասակաարգումից	160,888		160,888
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**296,930**	**38,667**	**335,597**
Ամորտիզացիա			
Առ 1 հունվարի 2022թ.	**22,044**	**5,152**	**27,196**
Տարեկան ամորտիզացիա	2,394	11,424	13,818
Նվազում	-	-	-
Վերադասակարգում	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**24,438**	**16,576**	**41,014**
Տարեկան ամորտիզացիա	23,590	14,596	38,186
Նվազում	-	-	-
Վերադասակարգում	-	-	-
Հիմնական միջոցի վերադասակաարգումից	135,670	-	135,670
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**183,699**	**31,172**	**214,871**
Հաշվեկշռային արժեք			
Առ 1 հունվարի 2022թ.	**22,015**	**60,965**	**82,980**
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**19,697**	**82,018**	**101,715**
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**113,231**	**7,495**	**120,726**

12. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

	31.12.2023թ.	31.12.2022թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Բնական խոտածածկով խաղադաշտ, մարգադաշտ, մազադպրոց	491,351	937,879
Արհեստական խոտածածկով խաղադաշտ	400,079	440,313
	891,430	**1,378,192**

12.1 Բնական խոտածածկով խաղադաշտ, մարզադաշտ, մազադպրոց

հազար դրամ

Անավարտ շինությունների գտնվելու վայրը	01.01.2023թ.	Շարժը		31.12.2023թ.
		Ավելացում	Նվազեցում	
ք. Սևան	299,206	-	-	299,206
Ներքին Կարմիր Աղբյուր	158,731	-	-	158,731
Արարատի մարզ	20,217	-	-	20,217
Շիրակի մարզ	13,197	-	-	13,197
Սիսիանի մարզադպրոց	167,118	-	167,118	-
Ստեփանակերտ	279,411	-	279,411	-
	937,879	**-**	**446,528**	**491,351**

12.2 Արհեստական խոտածածկով խաղադաշտ

հազար դրամ

Մարզադաշտերն ըստ ՀՀ մարզերի	01.01.2023թ.	Շարժը		31.12.2023թ.
		Ավելացում	Նվազեցում	
Կոտայքի մարզ	50,775	131,946	-	182,721
Գեղարքունիքի մարզ	166,843	-	5,600	161,243
Արմավիրի մարզ	-	36,073	-	36,073
Ք. Երևան	-	16,033	-	16,033
Արարատի մարզ	3,200	4,008	3,200	4,008
Սյունիքի մարզ	173,466	-	173,466	-
Տավուշի մարզ	26,829	-	26,829	-
Արագածոտնի մարզ	6,400	-	6,400	-
Լոռու մարզ	12,800	16,060	28,860	-
	440,313	**204,121**	**244,354**	**400,079**

13. Պաշարներ

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Նյութեր	26,477	27,647
Վառելիք	2,345	1,465
Պահեստամասեր	1,727	2,280
Այլ նյութեր	1,049,005	1,115,537
Ապրանքներ պահեստում	215,815	170,029
	1,295,370	**1,316,958**
Արժեզրկման պահուստ	*(5,586)*	*(14,928)*
	1,289,784	**1,302,030**

14. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	58,384	68,504
Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով	31,882	50,822
	90,266	**119,326**
Տրված ընթացիկ կանխավճարներ	286,929	869,331
Արժեզրկման պահուստ	*(138,389)*	*(138,389)*
	148,540	**730,942**
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեին	6,066	29,399
Այլ դեբիտորական պարտքեր	9,749	11,057
	15,815	**40,456**
	254,621	**890,724**

15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում	2,584,264	2,538,201
Դրամական միջոցներ դրամարկղներում	31,441	20,072
	2,615,705	**2,558,273**

16. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Մնացորդ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	***14,665,525***	***12,819,225***
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	85,466	1,399,574
Վերադասակարգում եկամուտներին վերաբերող շնորհին	1,193,533	1,538,672
Հաշվի ճշգրտումից շնորհի ավելացում	-	3,287
Շնորհի ճանաչումը որպես եկամուտ	(1,966,609)	(1,095,233)
Մնացորդ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	***13,977,915***	***14,665,525***

17. Ստացված վարկեր և փոխառություններ

	Արժույթ	Մարման ժամկետ	Դրույք (%)	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Ապահովված օվերդրաֆտ առևտրային բանկ	Եվրո	2023	7	736,938	285,641
Չապահովված վարկ ՖԻՖԱ - ից	ԱՄՆ դոլար	2023	անտոկոս	-	196,785
Չապահովված վարկ UEFA - ից	Եվրո	2023	3	909,237	-
				1,646,175	**482,426**

18. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	94,341	58,682
Ստացված կանխավճարներ	3,512,515	2,581,347
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	148,940	118,905
Կրեդիտորական պարտքեր ձեռքբերումների գծով	357,191	237,834
Կրեդիտորական պարտքեր հիմնական միջոցների գծով	9,898	3,282
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	2,132	107
Այլ	6,418	6,540
	4,131,435	**3,006,697**

19. Եկամուտներին վերաբերող շնորհներ

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Մնացորդ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	***2,950,253***	***2,405,726***
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	2,795,420	7,060,060
Տարվա ընթացքում օգտագործված շնորհի գումար	(1,886,910)	(4,977,781)
Վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհի	(1,193,533)	(1,534,226)
Փոխարժեքային տարբերություն	171	(3,526)
Մնացորդ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	***2,665,401***	***2,950,253***

20. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հետևյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողաբար կիրառվել է սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր տարիների համար և Խմբի ֆինանսական վիճակի ներկայացման ժամանակ: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է Խմբի բոլոր Կազմակերպությունների կողմից:

Համախմբման հիմքերը

Դուստր Կազմակերպություններն այն կազմակերպություններն են, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբը կարող է ղեկավարել կազմակերպության գործունեության ֆինանսական և գործառնական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտ ստանալու համար:

Ներխմբային հաշվեկշիռները և ներխմբային գործարքներից չիրացված եկամուտներն ու ծախսերը դուրս են հանվում համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ: Անհրաժեշտության դեպքում ճշգրտումներ են արվում դուստր Կազմակերպությունների ֆինանսական հաշվետվություններում՝ դրանց քաղաքականությունները Խմբի այլ անդամների կողմից կիրառվող քաղաքականությանը համապատասխանեցնելու համար:

Արտարժույթով գործարքներ

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից բացի այլ արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ գերիշխող փոխարժեքով: Որոշակի ամսաթվի դրությամբ գերիշխող փոխարժեքների սահմանման դեպքում հղում է արվում ՀՀ կենտրոնական բանկի կայքում՝ www.cba.am, հրապարակված փոխարժեքներին: Դրամային ակտիվների և պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են, բացառությամբ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրումների հեջավորման պահանջներին համապատասխանող արտարժույթով արտահայտված փոխառությունների, որոնց դեպքում տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և վերափոխարկման հետևանքով առաջացած փոխարժեքային տարբերությունների հետ միասին կուտակվում են արտարժույթի փոխանակման պահուստում:

Վաճառքի համար մատչելի դրամային ակտիվների վերափոխարկման արդյունքում առաջացած փոխարժեքային տարբերությունները համարվում են իրական արժեքի փոփոխության առանձին տարր և ճանաչվում են շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ոչ դրամային ակտիվների գծով փոխարժեքային տարբերությունները կազմում են ֆինանսական գործիքի գծով ճանաչված ընդհանուր շահույթի կամ վնասի մասը:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Հիմնական միջոցների միավորի ինքնարժեքը ձեռքբերման արժեքից բացի ընդգրկում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները և հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման սկզբնապես գնահատված անխուսափելի ծախսումների գումարը:

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման: Մնացած բոլոր հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով:

Մաշվածության հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ տոկոսադրույքները.

Հիմնական միջոցներ	Տարեկան տոկոսադրույք	Հաշվարկման մեթոդ
Շենքեր, կառուցվածքներ	5 %	Գծային
Մեքենաներ և սարքավորում	20 %	Գծային
Տրանսպորտային միջոցներ	20 %	Գծային
Արտադրական գույք,	20 %	Գծային
Այլ հիմնական միջոցներ	20 %	Գծային

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿՎ), բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ), գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

Խմբի ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առեւտրային դեբիտորական պարտքեր, դրամական միջոցները եւ դրանց համարժեքները:
Առեւտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Այս գործընթացում գնահատվում է առեւտրային դեբիտորական պարտքերի չվճարման հավանականությունը: Այդ հավանականությունը, այնուհետեւ, բազմապատկվում է կանխատեսվող կորստի գումարի չափով՝ առեւտրային դեբիտորական պարտքերի ողջ ժամկետի գծով ակնկալվող կորստի գնահատման նպատակով:

Ֆինանսական պարտավորություններ

Խմբի ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի; իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Պաշարներ

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:
Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է կշռված միջին բանաձևով:
Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, մասնավորապես ավտոմեքենաների ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:
Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով:
Պաշարների իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են, երբ կա հիմնավորված երաշխիք, որ շնորհները ստացվելու են և բոլոր կից պայմանները կատարվելու են: Երբ շնորհը վերաբերում է ծախսային հոդվածին, այն ճանաչվում է եկամուտ այն ժամանակաշրջանների ընթացքում, որոնցում շնորհը պարբերական հիմունքով անհրաժեշտ է համապատասխանեցնել նախատեսված հատուցվող ծախսերին: Երբ

շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Շահութահարկ

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից և հետաձգված հարկից:
Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման/ (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում է տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի մեջ:
Կազմակերպության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները եւ հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող եւ նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) եւ չօգտագործված հարկային կորուստի հետագա տարիներ փոխանցմամբ:
Ժամանակավոր տարբերությունների հետեւանքով առաջացած հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվեկշռային մեթոդով, հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար օգտագործված ակտիվների եւ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների եւ հարկման նպատակներով օգտագործված գումարների (հարկային բազայի) միջեւ ժամանակավոր տարբերությունների վրա:
Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

21. Պայմանական պարտավորություններ

Ապահովագրություն

Խումբը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Խմբի գործունեության հետևանքով:

Իրավական պարտավորություններ

Խմբի ղեկավարությունը տեղյակ չէ Խմբի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Խումբը բավարարում է ՀՀ օրենսրությամբ ներկայացվող շրջակա միջավայրի պահպանության պահանջներին և վստահ է, որ Խումբը չունի շրջակա միջավայրի հետ կապված էական ընթացիկ պարտավորություններ: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ օրենսդրությունը դեռ զարգացման փուլում է և օրենսդրության հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները կարող են ապագայում առաջացնել էական պարտավորություններ:

Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք հազ. դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Առևտրային դեբիտորական պարտքեր	58,384	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորա-կան պարտքեր	357,191	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Վարկեր	736,938	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) վարկերի գծով պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 3	Կիրառելի չէ